

**«Թումանյան» փաստաբանական գրասենյակի վերլուծությունը՝ «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի վերաբերյալ**

ՀՀ կառավարությունը 2020 թվականի հունիսի 30-ին հանրային քննարկման է դրել «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագիծը, որով նախատեսվում է էականորեն բարձրացնել դատարան դիմելու համար սահմանված պետական տուրքի դրույքաչափերը:

Նախագծով ի թիվս այլնի առաջարկվել է՝

- ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքով սահմանված կարգով դատարաններ տրվող հայցադիմումների ոչ գումարային պահանջով հայցադիմումի համար պետական տուրքը սահմանել 20 000 դրամ՝ ներկայիս 4 000 դրամի փոխարեն,
- Վարչական դատարան ներկայացվող հայցադիմումների համար սահմանել 10 000 դրամ (որոշ բացառություններով)՝ ներկայիս 4 000 դրամի փոխարեն,
- Մանկության դատարան ներկայացվող դիմումների համար՝ իրավաբանական անձանց սնանկ ճանաչելու դիմումների համար՝ դիմումի պետական տուրքը սահմանել 1 000 000 դրամ՝ ներկայիս 500 000 դրամի փոխարեն,
- Մանկության դատարան ներկայացվող դիմումների համար՝ ֆիզիկական անձանց (ներառյալ՝ անհատ ձեռնարկատերերին) սնանկ ճանաչելու դիմումների համար՝ պետական տուրքը սահմանել 250 000 դրամ՝ ներկայիս 100 000 դրամի փոխարեն:

**«Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի նախագծի վերաբերյալ.**

ՀՀ Սահմանադրության 61-րդ հոդվածն ամրագրում է , որ յուրաքանչյուր ոք ունի իր իրավունքների և ազատությունների արդյունավետ դատական պաշտպանության իրավունք: Մարդու իրավունքների եվրոպական Կոնվենցիայի 6-րդ և 13-րդ հոդվածներով ամրագրում են արդար դատաքննության և իրավական պաշտպանության **արդյունավետ** միջոցի իրավունքները:

Արդյունավետ դատական պաշտպանությունն իր մեջ ներառում է նաև դրա մատչելիությունը, այդ թվում՝ ֆինանսական առումով: Այս դիրքորոշումը ՄԻԵԴ-ը արտահայտում է Կոնվենցիայի 6-րդ հոդվածը մեկնաբանելիս՝

«Գործի հատուկ հանգամանքներում սույն իրավունքի գործնական եւ արդյունավետ բնույթը կարող է խախտվել, օրինակ՝ վարույթն արգելող բնույթի ծախսերով՝ հաշվի առնելով անհատի ֆինանսական կարողությունը՝ [...] չափազանց մեծ դատական վճարներով (Kreuz-ն ընդդեմ Լեհաստանի, §§ 60-67), Podbielski-ն եւ PPU Polpure-ն ընդդեմ Լեհաստանի, §§ 65-66, Weissman-ը եւ այլք ընդդեմ Ռուսիայի, § 42, եւ, ի հակադրություն դրա, Reuther-ն ընդդեմ Գերմանիայի (որոշում)) »:<sup>1</sup>

Կոնվենցիայի 6-րդ հոդվածի խախտում է ճանաչվել նաև Kordos v. Poland (no. 26397/02) գործով՝ հիմք ընդունելով չափազանց բարձր դատական տուրքերը: <sup>2</sup>

Պետական տուրքի մասին օրենքի փոփոխությունների նախագծի հիմնավորման մեջ տեղ գտած նվազագույն զամբյուղի արժեքների հղումների ուսումնասիրությունը ցույց տվեց, որ դրանք Եվրոմիության երկրների նվազագույն զամբյուղների արժեքներն են՝ հաշվարկված յուրաքանչյուր պետության պաշտոնական թվերով՝ վերջին 40 տարվա ընթացքում, որոնք հաճախ տասնամյակներով չեն թարմացվել: Այդ տվյալները վաղուց հնացել են: Չեխիայի համար նշված 126, Էստոնիայի համար՝ 144 և Գերմանիայի համար՝ 220 Եվրոն ոչ թե նվազագույն սպառողական զամբյուղի արժեքներն են, այլ դրանց միայն պարենային մասնաբաժնի արժեքները<sup>3</sup> 4:

Այսպիսով, հիմնավորման մեջ այլ երկրների նվազագույն պարենային զամբյուղի արժեքը ներկայացվում է որպես նվազագույն սպառողական զամբյուղի արժեք, իսկ Հայաստանի համար իրոք նշվում է նվազագույն սպառողական զամբյուղի արժեքը՝ 61, 390 դրամը, մինչդեռ Հայաստանում պարենային զամբյուղի արժեքը 32,727 դրամ է: Համեմատությունը անհրաժեշտ է կատարել նույն չափանիշի հիման վրա:

Վերջին ուսումնասիրությունը, որը կատարվել է Եվրոմիության երկրների համար այժման գներով, միջինացվել, բերվել նույն փոխարժեքի, կատարվել է 2015 թվականին,

<sup>1</sup> [https://www.echr.coe.int/Documents/Guide\\_Art\\_6\\_HYE.pdf](https://www.echr.coe.int/Documents/Guide_Art_6_HYE.pdf), էջ 19


<sup>2</sup> <https://www.hrlc.org.au/human-rights-case-summaries/kijewska-v-poland-2007-echr-7300201-6-september-2007#:~:text=Excessive%20Court%20Fees%20Incompatible%20with%20the%20Right%20to%20a%20Fair%20Hearing,-September%2025%2C%202007&text=The%20European%20Court%20of%20Human,a%20violation%20of%20that%20Right>

<sup>3</sup> <https://ec.europa.eu/social/main.jsp?catId=738&langId=en&pubId=7875&furtherPubs=yes>

<sup>4</sup> [https://www.e-draft.am/projects/2576/justification#\\_ftn14](https://www.e-draft.am/projects/2576/justification#_ftn14)


տեղադրված է Եվրոպական Միության պաշտոնական կայքէջում<sup>5</sup>: Ըստ այդ ուսումնասիրության, որն անհամեմատ ավելի հավաստի արդյունքներ ունի, նվազագույն զամբյուղի արժեքը շատ ավելին է, քան նախագծի հիմնավորման մեջ է նշված: Ամենափոքր արժեքով զամբյուղը միայնակ ապրող կնոջ և երկու երեխաներով ընտանիքի համար Բուդապեշտում է՝ համապատասխանաբար 349 և 785 Եվրո, ամենաբարձրը Հելսինկիում է՝ համապատասխանաբար 924 և 1,974 Եվրո:

Աղյուսակում կարող եք տեսնել ավելի շատ օրինակներ:



<sup>5</sup> <https://ec.europa.eu/social/BlobServlet?docId=14917&langId=en>

**Figure 47: The total cost of four baskets for three different family types in eight countries, Euro per month, 2015.**



\* Աղյուսակն ըստ՝ <https://ec.europa.eu/social/BlobServlet?docId=14917&langId=en>, էջ 241

### Դատարան դիմելիս պետական տուրքերը այլ երկրներում.

1. Բելգիայում մինչև 12,500 Եվրոյի հայցագնի դեպքում տուրքը կախված դատական աստյանից կազմում է 30-100 Եվրո (նվազագույն սպառողական զամբյուղը՝ մոտ 700 Եվրո):

2. Չեխիայում տուրքը կազմում է 37,5 Եվրո մինչև 750 Եվրո հայցագնի դեպքում, 750 Եվրոյից ավել հայցագնի դեպքում՝ 5%, եթե վեճը ծագել է պայմանագրային պարտավորություններից: Ոչ պայմանագրային դրամական պահանջների դեպքում տուրքը սկսվում է 12 Եվրոյից:

3. Հունաստանում կազմում է հայցագնի մոտ 1,5 %-ը:

4. Խորվաթիայում մինչև 400 Եվրո հայցագնի համար վճարվում է մոտ 14 Եվրո, մինչև 800 Եվրոն՝ 28 Եվրո և համամասնորեն ավելանում է մինչև 2000 Եվրոյի հայցագինը: Երբ հայցագինը դրանից ավել է, վճարվում է 67 Եվրո + հայցագնի և 667 Եվրոյի տարբերության 1 %-ը:

5. Լատվիայում տուրքը կազմում է հայցագնի 15%-ը, նվազագույնը՝ 71.41 եվրո:

6. Ուկրաինայում կազմում է հայցագնի 1%-ը ֆիզիկական անձանց համար, 1.5 %՝ իրավաբանական անձանց համար, նվազագույնը՝ մոտ 26 եվրո:

7. Ղազախստանում ֆիզիկական անձանց համար տուրքը հավասար է հայցագնի 1%-ին, իսկ իրավաբանական անձանց համար՝ 3%-ին:

8. Բելոռուսիա՝ 5% է, սակայն նվազագույն շեմ չկա:

9. Վրաստան՝ 3%, նվազագույնը՝ 15,619 դրամ:

10. Իսրայելում մինչև 163 Եվրոյի հայցագնի դեպքում վճարվում է հայցագնի 2.5%-ը: Ինչքան բարձր է հայցագինը, այնքան քիչ տոկոսով է հաշվարկվում տուրքը, 5,5 միլիոն Եվրոյից ավել հայցագնի դեպքում կազմելով ընդամենը 1% (նվազագույն սպառողական զամբյուղը՝ 857 եվրո):

### **Ամփոփում և առաջարկներ.**

Հաշվի առնելով ՄԻԵԴ որոշումներում արտահայտված տեսակետն առ այն, որ դատական պաշտպանության իրավունքը ներառում է նաև դրա մատչելիությունը ֆինանսական տեսանկյունից, ինչպես նաև այլ երկրներում տուրքի չափերը՝ նվազագույն սպառողական և պարենային զամբյուղների արժեքների համեմատությամբ, կարծում ենք, որ առաջարկվող փոփոխությունները անհամաչափ են Հասայաստանի Հանրապետության բնակչության սոցիալ-տնտեսական վիճակի հետ: Մասնավորապես, ոչ դրամական պահանջի համար 20,000 դրամ նվազագույն պետտուրք սահմանելը այն պարագայում, երբ նվազագույն պարենային զամբյուղը կազմում է 32,700 դրամ է (պետտուրքը կկամգի դրա 61%-ը), իսկ նվազագույն սպառողական զամբյուղը 61, 390 (պետտուրքը կկամգի դրա 33%-ը), խախտում է արդյունավետ դատական պաշտպանության իրավունքը: Գործող օրենքում չկա նաև պետտուրքի առավելագույն շեմ, ինչը նույնպես ողջամիտ չէ, հաշվի առնելով, որ դատարանի ծախսերը չեն ավելանում զուտ հայցագնի բարձր լինելու պատճառով: Միննույն ժամանակ, գիտակցում ենք Հայաստանում դատական համակարգի ծանրաբեռնվածության խնդիրը և պետտուրքի մասին օրենքում փոփոխություններ կատարելու անհրաժեշտությունը, ուստի առաջարկում ենք՝

1. Քաղաքացիական դատավարության օրենսգրքով սահմանված կարգով դատարաններ տրվող հայցադիմումների, դիմումների, դատարանի դատական ակտերի դեմ վերաքննիչ և վճռաբեկ բողոքների համար պետական տուրքը թողնել անփոփոխ

2. Վարչական դատավարության օրենսգրքով սահմանված կարգով դատարաններ տրվող հայցադիմումների, դիմումների, դատարանի դատական ակտերի դեմ վերաքննիչ և վճռաբեկ բողոքների համար պետական տուրք սահմանելուց պետք է հնարավորիս գերծ մնալ, նախատեսելով այն միայն բացառիկ դեպքերում, քանի որ պետությունը մարդու հիմնարար իրավունքների ու ազատությունների հիմնական հասցեատերն է և պետք է ապահովի պետական ու տեղական ինքնակառավարման մարմինների որոշումներից պաշտպանվելու առավել արդյունավետ միջոցներ: Վարչական դատարանի գերծանրաբեռնվածության խնդիրը կարելի է լուծել այլ ճանապարհով՝ սահմանել վերադատության կարգով պարտադիր բողոքարկում մինչև դատարան դիմելը: